ՍԻՍԻԱՆ

ՆԻՒԹԵՐ ԱՊԱԳԱՅ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Ե. ՀԱՂԱԲԵԱՆԻ

ԾԱՌԱՅԱԲԱՆ

Նպատակ դնելով մեզ ազգագրական նիւթեր հաւաքել ամբողջ Զանգեզուրի գաւառի մասին, որ բռնում է Սիւնեաց աշխարհի մեծագոյն մասը և բնակուած է բաւական տարբեր ժողովուրդներով՝ մենք որոշեցինք նրան բաժանել մի քանի, ազգագրական տեսակէտից անհրաժեշտ մասերի և իւրաքանչիւրն առանձնապէս ուսումնասիրել հետևեալ ծրագրով.—

1) Պատմական տեսութիւն.—Այս մասում մենք շատ համառօտ կերպով լիշելու ենք մեր հին մատենագիրների աւանդածները մեր ուսումնասիրելիք գաւառի մասին, և աւելի մանրամասն պիտի կանգ առնենք մելիքների պատմութեան վրայ։

2) Տեղագրութիւն.—Այս մասում աւելի ուշադրութիւն դարձնելով բնական մասի վրայ՝ պիտի նկարագրենք առաւելապէս ալժմեան քաղաքական վիճակը, միանգամայն լիշելով և հինը։

3) Բնակիչների մասին կարելուոյն չափ մարդաբանական տեղեկութիւններ։

4) Բնակարանը և իւր պարագաները.

5) Զգեստը և զարդը.

6) Ընտանեկան բարք.—Որոշելով իւրաքանչիւր շրջանի բնիկ ժողովուրդը՝ հաւաքելու ենք ազգագրական տեղեկութիւններ նրանց ընտանեկան բարքի մասին (ամուսնութիւն, տղաբերք և կնունք, ընտանեկան կեանք, հիւանդութիւն և բժշկութիւն, մահ, թաղում, մեռելոց լիշատակ, հոգու և հանդերձեալ կեանքի մասին)։

7) Տարուայ կարևորագոյն տօները և նրանց առթիւ կատարուող ծէսերն ու ժողովրդական սովորութիւնները։

8) Ժողովրդական բանաւոր գրականութիւն։

Երբ այս ծրագրով նիւթեր կը հաւաքենք Զանգեզուրի ամբողջ գաւառի բոլոր մասերի վերաբերութեամբ՝ այն ժամանակ կը տանք ամբողջ գաւառին վերաբերեալ հետեւեալ վեց յօդուածները.

1) Վիճակագրական տեղեկութիւններ ամբողջ գաւառի վերաբերութեամբ.

2) Ամբողջ գաւառի տնտեսական դրութիւնը.

3) Կերակուր և խմիչք.

4) Հաւատք.

5) Ազգային իրաւաբանական սովորութիւններ, և

6) Հայ գրչագիրներ։

Մեր այսպէս վարուելու գլխաւոր պատճառն այն է, որ թէ տնտեսական և թէ վիճակագրական տեղեկութիւնները, որոնց մեծագոյն մասը պաշտօնական հիմնարկութիւններից պէտք է խնդրել՝ խառն են և ամբողջ գաւառին են վերաբերում, և ոչ թէ գաւառի մեր ցանկացած մասերին առանձնապէս։ Մէկ էլ որ համեմատութիւնների և ընդհանուր եզրակացութիւնների համար անհրաժեշտ է, որ ի միասին նկատուին։

Ինչ վերաբերում է սննդին՝ պէտք է ասեմ, որ միևնոյն գաւառի զանազան մասերի մէջ մեծ տարբերութիւններ չեն նկատուում. մանաւանդ որ փոքրիկ առանձնայատկութիւններն էլ դժուար չէ առանձնապէս լիշել։

Հաւատքի բաժնում մենք հաւաքելու ենք գլխաւորապէս կրապաշտական կրօնների մնացորդները, սնոտիապաշտութիւնները, կախարդութիւնները և այլն, որոնք առանձնապէս բնիկ ժողովրդի հետ այնքան էլ սերտ կապուած չեն, և կարող են վերագրուել նաև ամբողջ գաւառին, թէև հարկաւոր դէպքերում լիշելու ենք տեղը, ժողովուրդը և այլն։

Ազգային իրաւաբանական սովորութիւնների մէջ մենք առաւելապէս աշխատելու ենք նիւթեր հաւաքել մելիքների ժամանակ տիրապետող սովորութիւններից. թէև այդ միջոցներում միևնոյն գաւառում մի կամ մի քանի մելիքներ են եղել՝ բայց նրանք իրենց կարգերով, իրաւունքներով ու սովորութիւններով միմեանցից շատ չեն տարբերուել։

Մեր ճանապարհորդութեան միջոցին մենք իբր ուղեցոյց ընդունում ենք բազմարդիւն Հայր Ալիշանի «Սիսական»-ը։ Այս գեղեցիկ աշխատութիւնը մեզ արդէն բաւական նպաստեց մեր անցեալ ամառուայ ճանապարհորդութեան միջոցին։ Վերաստուգել այստեղ նկարագրուած տեղերը և լրացնել,—ահա այս կը լինի մեր նպատակը մեր աշխատութեան տեղագրական բաժնի մէջ։ Իսկ նրա թանկագին պատմական տեղեկութիւնները մեզ կառաջնորդեն աւելի ուշադրութիւն դարձնելու պատմական միջավայրերի վրայ։

Այս անգամ տպագրելով «Սիսականը»՝ մենք արդէն պատրաստունինք նաև Զանգեզուրի ոստիկանական շրջանի տեղագրութիւնը, որ լոյս կը տեսնէ Հանդիսի ներկայ տարուայ բ. գրքում։ Իսկ այս ամառ մենք կրկին կը շարունակենք մեր ճանապարհորդութիւնը։

Խնդրում ենք ձեռնհաս անձանց՝ քննադատել մեր ընդունած այս ծրագիրը և մատնանիշ անել այն միջոցների վրայ, որոնք կարող են նպաստել գործը աւելի լրիւ կատարելու։